ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Էմին Բեգլարյանի, Գայանե Դեմիրչյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Կարեն Սարդարյանի և Մարինե Ֆարմանյանի,

ելնելով ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի 2023 թվականի գործունեության և կատարողական ցուցանիշների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը հաստատելու անհրաժեշտությունից,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի 15-րդ ենթակետի բ) և դ) պարբերությունների, Պալատի կանոնադրության 16.5-րդ կետի 18-րդ ենթակետի բ) և դ) պարբերությունների պահանջներով,

Պալատի խորհուրդը, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

- ***Հաստատել ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի 2023 թվականի գործունեության և կատարողական ցուցանիշների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

16 հունվարի 2024թ.
թիվ 1/19-Լ
ք. Երևան